ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

16-ը ապրիլի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Ոստիկանության օրվա առթիվ

Հայաստանի Հանրապետության Ոստիկանության օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ իրավապահ համակարգի բոլոր աշխատակիցներին և ոստիկանության ծառայողներին:

Ոստիկանությունը և իրավապահ մարմինները նշանակալից դերակատարում ունեն մեր երկրի արտաքին անվտանգության, ներքին կարգուկանոնի պահպանության, հանդուրժող և իրավահավասար հանրության ձևավորման գործում: Իր գործի նվիրյալ, պատասխանատու ոստիկանը պետք է վստահություն և պաշտպանվածություն ներշնչի յուրաքանչյուր քաղաքացու՝ միաժամանակ պահպանելով հասարակական կարգն ու պայքարելով հանցավորության դեմ:

Կարևորելով ոսիկանության հետևողական ծառայությունը՝ առանձնահատուկ գնահատելի է նրանց անձնվեր մասնակցությունը հայրենիքի պաշտպանության գործին: Առաջնահերթ ուզում եմ հիշենք և վառ պահենք համակարգի պարտաճանաչ ու հայրենասեր այն ոստիկանների հիշատակը, ովքեր անվարան մասնակցել են ռազմական գործողություններին և հանուն հայրենիքի զոհել կյանքը:

Հարգելի՛ ոստիկաններ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ.

Ձեզ վստահված գործառույթները պահանջում են ցուցաբերել ոչ միայն պրոֆեսիոնալիզմ, այլ նաև օրինակելի, համբերատար ու բարյացակամ վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ: Մասնագիտական տոնի առթիվ կրկին շնորհավորելով՝ մաղթում եմ ձեզ քաջառողջություն, անվտանգ ու արդյունավետ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ